Ստորև ներկայացնում ենք ստեղծագործական նախագծի նմուշօրինակ:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ «ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ - ՏՈՆԱՎԱՃԱՌ»

1. Նախագծի անհրաժեշտությունը:

Գեղագիտական դաստիարակության գործում իր ուրույն տեղն ունի երեխաների ստեղծագործությունների ցուցահանդես-տոնավաճառների կազմակերպումը:

Երեխաների ստեղծագործությունների յուրաքանչյուր ցուցահանդես մշակութային կյանքի իրադարձություն է: Այն հնարավորություն է ընձեռում ծնողներին, համադասարանցիներին, ուսուցիչներին՝ պատկերացում կազմելու փոքրիկ վարպետների կատարած աշխատանքների մասին: Ցուցադրման ներկայացված աշխատանքները կարող են լինել դեկորատիվ-կիրառական բնույթի՝ ասեղնագործ և խեցեգործական իրեր, կարպետներ, գորգեր, բնական նյութերից պատրաստված կոմպոզիցիոն աշխատանքներ, նկարներ, քանդակներ, ինքնաշեն փափուկ խաղալիքներ և այն:

Ցուցահանդես-տոնավաճառի կազմակերպման նպատակն է ցուցադրման ներկայացնել երեխաների պատրաստած դեկորատիվ-կիրառական նմուշները, ասեղնագործ և խեցեգործական իրերը, կարպետները, գորգերը, նկարները, քանդակները, ինքնաշեն խաղալիքները և այլ ստեղծագործություններ:

2. Նկարագրեք ցուցահանդեսի կազմակերպման ընթացքը:

Կատարեք ցուցանմուշների ճիշտ ընտրություն (նախնական ընտրությունը մասնագետների կողմից) ցուցադրման նախապատրաստման համար:

Երեխաների ստեղծագործությունների ցուցադրումները կարելի է ավարտել ցուցադրվող աշխատանքների վաճառքով: Նախապես ընտրեք աշակերտական խորհուրդ, որը և կկազմի վաճառվող ցուցանմուշների ցուցակը, գնացուցակը և կկազմակերպի դրանց վաճառքը: Վաճառքից ստացված հասույթը մանկավարժների ղեկավարությամբ տնօրինում է աշակերտական խորհուրդը:

3. Թվարկեք այն պայմանները, որոնք անհրաժեշտ են նախագծի իրականացման համար:

Ցուցահանդես-տոնավաճառի կազմակերպման համար անհրաժեշտ է՝

- տնօրինության համաձայնությունը,
- դպրոցականների նախաձեռնությունը,
- աշխատանքային խմբի ստեղծում,
- ցուցահանդես-վաճառքի տարածք՝ դպրոցի դահլիճ, սրահ, դպրոցամերձ հրապարակ:

4. Նշեք նախագծի իրականացման միջոցները և կազմակերպիչներին:

Միջոցներն են՝ ցուցասրահ, ցուցապահարաններ, ցուցադրման սեղաններ, վահանակներ, պաստառներ:

Պատասխանատուներն են՝ մանկավարժները, խմբակավարները, ծնողները, աշակերտական խորհուրդը:

5. Ո՞րն է տոնավաճառի կազմակերպման անհրաժեշտությունը:

Նպատակահարմար է ցուցադրումից հետո կազմակերպել տոնավաճառ: Վաճառքից ստացած հասույթը ներդնել դպրոցականների ֆոնդի (աշխատանքային նյութեր, միջոցներ, գործիքներ ձեռք բերելու) զարգացման համար:

6. Նկարագրե՛ք նախագծի առավելություններն ու թերությունները:

Առավելություններն են.

- Երեխաները շփվում են գեղեցիկի հետ:
- Ծանոթանում են կիրառական արվեստի տեսակներին:
- Զարգանում են համագործակցելու, թիմային աշխատելու ունակությունները:
- Գնահատում են շփման, հաղորդակցման, սպասարկման կուլտուրան:
- Սովորում են տեսնել, գնահատել և ստեղծել գեղեցիկը:

Թերություններն են.

- կազմակերպչական և նախապատրաստական փուլերը բավականին ժամանակ են պահանջում:

7. Ցուցահանդեսի կազմակերպման ձևերը և մեթոդները:

Ցուցադրվող յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ պետք է նշված լինի հեղինակի անունը, ազգանունը, տարիքը, խմբակի անունը և դպրոցի անվանումը (թիվը): Այդ տեղեկությունները կարելի է ներկայացնել նաև առանձին ցուցակով՝ սրահի մի մասում: Այդ աշխատանքներում, ինչպես նաև ցուցասրահների հերթապահության համար պետք է ընդգրկել աշակերտներին:

8. Գովազդ (թերթիկներ, հայտագրեր):

Ցուցահանդեսներին մեծ թվով այցելուների (աշակերտ, ծնող, ուսուցիչ) մասնակցությունն ապահովելու նպատակով դպրոցներում պետք է փակցնել հայտարարություններ, ազդագրեր, տեղեկատվություններ, վազող տողով հայտեր և այլն: Ցուցահանդեսը կարող է ունենալ նաև կարգախոսներ:

«Իրական հարստությունը մարդու համար աշխատելու կարողությունն է»:

Եզոպոս

Ստեղծագործական նախագծի հեղինակներ՝

1._____ _____

2._____ _____

Նախագծի պաշտպանություն:

_____

ամիս ամսաթիվ տարի

Տարբերակ 1.

Ստեղծագործական նախագծի կառուցվածքի նմուշ

Ստեղծագործական նախագիծ կազմելու կարևորագույն պայմաններն են՝

- Նախագծի թեմայի ընտրություն:
- Նախագծի խնդիրների ճշտում և քննարկում:
- Տեղեկատվության հավաքում:
- Նախագծի կատարման հաջորդականության մշակում:
- աշխատանքի պլանավորում,
- նախագծի պաշտպանություն,
- գնահատում:

ՆԱԽԱԳԾԻ ԹԵՄԱՆ

1. Ձևակերպե՛ք նախագծի խնդիրը: Լուսաբանե՛ք լուծման անհրաժեշտությունը:

2. Թվարկե՛ք այն պահանջները, որոնք անհրաժեշտ են նախագծի իրականացման համար:

3. Առաջարկե՛ք նախագծի բազմազան տարբերակներ:

4. Նկարագրե՛ք նախագծի վերջնական պատկերը: Բնութագրե՛ք:

5. Թվարկե՛ք այն նյութերը, որոնք անհրաժեշտ են նախագիծն իրականացնելու համար:

6. Թվարկե՛ք այն միջոցները, որոնք անհրաժեշտ են նախագիծն իրա-կանացնելու համար:

7. Կատարե՛ք նախագծում:

_____

_____

8. Նկարագրե՛ք նախագծի առավելություններն ու թերությունները:

_____

_____

9. Գնահատե՛ք՝ աշխատանքն արդյոք համապատասխանո՞ւմ է պահանջներին:

_____

_____

10. Ընտրե՛ք գովազդի տարբեր ձևեր (ոտանավոր, թերթիկներ, հայտագրեր):

_____

_____

Ստեղծագործական նախագծի հեղինակ՝

1._____ _____

2._____ _____

Կատարե՛ք նախագծի պաշտպանություն:

_____

ամիս ամսաթիվ տարի